

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՎԵՏԻՍԻ ՏԵՏԵՅԱՆ

**ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎՐԱԻՆՏԵԳՐԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԸ (1991-2004 ԹԹ.)**

**Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման համար**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

պ.գ.թ., դոցենտ
Է.Լ.Զոհրաբյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պ.գ.դ., պրոֆեսոր
Յ.Ս. Աբրահամյան

պ.գ.թ., դոցենտ
Լ.Ս. Մկրտչյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. հուլիսի 1-ին, ժ. 15.00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի 006 “Համաշխարհային պատմություն” մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Սարշալ Բաղրամյան 24/4)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2015 թ. մայիսի 30-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝

պ.գ.թ., դոցենտ Ռ.Պ. Ղազարյան

Թեմայի արդիականությունը

Հարավային Կովկասի երկրների ետխորհրդային ժամանակաշրջանի պատմական զարգացման իրողություններից մեկը եվրախնտեզրման գործընթացն է, որն ընդգրկում է փոխհարաբերությունների բազմաբնույթ ոլորտներ և բովանդակում է բազմաշերտ հիմնահարցեր: Հարավկովկասյան տարածաշրջանում ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացների խորապատկերի վրա այս հիմնահարցերի գիտական լուսաբանումը շարունակում է մնալ արդիական թե՛ ճանաչողական, թե՛ տեսական, թե՛ գործնական առումներով:

Հարավային Կովկասի պետությունների եվրախնտեզրման գործընթացը հիմնականում դիտարկվել է տարածաշրջանում եվրոպական կառույցների քաղաքականության, ինչպես նաև Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունների ուսումնասիրության համատեքստում: Անհրաժեշտ ուշադրությունից դուրս են մնացել և համակողմանի քննության չեն առնվել Հարավային Կովկասի պետությունների եվրախնտեզրման գործընթացի համատեքստում այս երկրներում տեղ գտած վերափոխումները՝ տնտեսական, սոցիալական, մարդու իրավունքների, այդ թվում նաև ազգային փոքրամասնությունների պաշտպանության, մշակույթի, կրթության ոլորտներում, դրանց արդյունքների պատմագիտական արժևորումը: Հետևաբար չափազանց արդիական է դրանք մեկտեղելու, համադրելու և համակողմանի հետազոտության ենթարկելու խնդիրը:

Ուսումնասիրության **օբյեկտը** Հարավային Կովկասի պետությունների եվրախնտեզրման գործընթացն է 1991-2004 թթ.:

Ուսումնասիրության **առարկան** եվրոպական կառույցների հետ Հարավային Կովկասի պետությունների փոխհարաբերություններն են, ինչպես նաև այդ կառույցների առջև վերջիններիս ստանձնած պարտավորությունները, դրանց իրականացման ընթացքը, տեղ գտած վերափոխումները, իրագործված օժանդակության ծրագրերի նպատակներն ու արդյունքները:

Ուսումնասիրության **նպատակը** պատմագիտական դիտանկյունից հարավկովկասյան պետությունների եվրախնտեզրման, ինչպես նաև այդ գործընթացի համատեքստում տեղ գտած վերափոխումների, դրանց արդյունքների համակողմանի հետազոտումը, համադրումը և համեմատական վերլուծությունն է:

Ուսումնասիրության նպատակին համապատասխան առաջ են քաշվել հետևյալ **խնդիրները**.

- վեր հանել եվրոպական կառույցների քաղաքականության առանձնահատկությունները Հարավային Կովկասի պետություններում

- համադրել Հարավային Կովկասի պետությունների եվրոպական կառույցների առջև ստանձնած պարտավորությունները, դրանց իրականացման ընթացքը, հետևանքները

- համեմատական, քննական վերլուծության ենթարկել հարավկովկասյան պետությունների եվրախնտեզրման գործընթացի համատեքստում այս երկրներում տեղ գտած վերափոխումները

- քննության առնել եվրոպական կառույցների կողմից

Հարավային Կովկասի հանրապետություններում իրագործված օժանդակության ծրագրերի նպատակներն ու արդյունքները

- ներկայացնել հարավկովկասյան պետությունների եվրոպական կառույցներին ինտեգրման գործընթացի պատմագիտական գնահատականը

Ատենախոսության գիտական նորույթը

Առաջին անգամ պատմագիտական քննության են ենթարկվել Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի եվրաինտեգրման գործընթացի համատեքստում երեք երկրներում ժողովրդավարական կառույցների հիմնադրման և գործունեության, տնտեսական, սոցիալական, մարդու իրավունքների, այդ թվում նաև ազգային փոքրամասնությունների պաշտպանության, մշակույթի, կրթության ոլորտներում տեղ գտած վերափոխումները, դրանց արդյունքները:

Ուսումնասիրության շրջանակներում մեկտեղվել և քննական վերլուծության են ենթարկվել եվրոպական կառույցների կողմից էներգետիկայի, տրանսպորտի, բնապահպանության, մշակույթի, կրթության և մի շարք այլ ոլորտներում առաջ քաշված տարածաշրջանային համագործակցության նախաձեռնությունների արդյունքները:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները

Ուսումնասիրության ժամանակագրական շրջանակն ընդգրկում է 1991-2004 թթ.: Ուսումնասիրության համար որպես մեկնակետ ընտրվել է 1991 թ., քանի որ նույն թվականի դեկտեմբերին Եվրոպական Համայնքը ճանաչեց Հարավային Կովկասի պետությունների անկախությունը: Ուսումնասիրության շարադրանքն ավարտվում է 2004 թ., երբ հարավկովկասյան պետություններն ընդգրկվեցին Եվրոպական Հարևանության Քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը

Ուսումնասիրությունը կատարվել է պատմաքննական, պատմահամեմատական և վերլուծական մեթոդների կիրառմամբ: Ատենախոսությունը շարադրելիս պահպանվել են պատմագիտության հիմնական պատմականության, գիտական օբյեկտիվության, համակողմանիության սկզբունքները, ինչը ենթադրում է անաչառություն ներկայացված գնահատականներում և գիտական քննադատություններում:

Ատենախոսության կիրառական նշանակությունը

Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտակար լինել Հարավային Կովկասի պետությունների և եվրոպական կառույցների փոխհարաբերություններին նվիրված հետագա հետազոտությունների շրջանակներում, ուսումնական ծրագրեր, դասախոսություններ կազմելու համար:

Ատենախոսության փորձաքննությունը

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի խորհրդում, քննության և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնում: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի վեց հոդվածներում:

Ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը

Ատենախոսության շրջանակներում օգտագործվել են հայերեն, ռուսերեն և անգլերեն մի քանի տասնյակ արխիվային վավերագրեր, եվրոպական կառույցների կողմից ընդունված փաստաթղթեր, վիճակագրական նյութեր, մամուլի հրապարակումներ:

Մեր կողմից ուսումնասիրվել են և ատենախոսության շարադրման ընթացքում օգտագործվել են Հայաստանի ազգային արխիվի թիվ 326 ֆոնդի մի շարք փաստաթղթեր, որոնք վերաբերում են ՀՀ Արտաքին գործերի նախարարության 1991-1993 թթ. գործունեությանը՝ մասնավորապես եվրոպական կառույցների հետ ՀՀ հարաբերությունների սկզբնավորմանը, առաջին փոխայցելություններին¹:

ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժնում պահվող նյութերը՝ մասնավորապես եվրոպական միության, եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ-ի հետ հարաբերություններին վերաբերող գրագրությունը, տեղեկանքները, հաշվետվությունները և այլ փաստաթղթեր, լույս են սփռում ոչ միայն Հայաստանի և եվրոպական կառույցների հարաբերությունների, այլև եվրոպական կառույցների կողմից Հարավային Կովկասի նկատմամբ քաղաքականության տարբեր հիմնահարցերի վրա²:

ԵՄ-ի և Հարավային Կովկասի հանրապետությունների հարաբերությունների ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունեն 1996 թ. ապրիլին ԵՄ-ի և Երեք երկրների հետ ստորագրված Գործընկերության և համագործակցության համաձայնագրերը (ԳՀՀ)³, ՏԱՄՍ-ի շրջանակներում ընդունված Ազգային ինդիկատիվ ծրագրերը⁴, ինչպես նաև եվրոպական Հարևանության Քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում ընդունված փաստաթղթերը⁵:

¹Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ.326, ց. 9, գ. 34, 47:

²ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ց. 1, գ. 184, 193, ց. 2, գ. 22, ց.3, գ. 191, ց. 5, գ.58, ց. 6, գ. 34, ց. 9, գ. 68, 71, ց. 10, գ. 55, 59:

³Համաձայնագիր գործընկերության և համագործակցության մասին՝ մի կողմից եվրոպական Համայնքների և դրանց անդամ պետությունների և մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության միջև

<http://www.mineconomy.am/uploads/Hamadzaynagir.pdf> (14.10.14):

Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and Georgia, of the other part

http://eeas.europa.eu/delegations/georgia/documents/eu_georgia/eu_georgia_pca_en.pdf (14.10.14)

Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Azerbaijan, of the other part

http://eeas.europa.eu/delegations/azerbaijan/documents/eu_azerbaijan/eu-az_pca_full_text.pdf

(14.10.14):

⁴Country Strategy Paper 2002-2006, National Indicative Programme 2002-2003, Republic of Armenia, 27 December 2001 http://eeas.europa.eu/armenia/csp/02_06_en.pdf (23.09.14), Country Strategy Paper 2002-2006, National Indicative Programme 2002-2003 Georgia, 27 December 2001 http://eeas.europa.eu/georgia/csp/02_06_en.pdf (23.09.14):

⁵Wider Europe – Neighbourhood: A new Framework for relations with our Eastern and Southern Neighbours, COM(2003) 104 final, 11.3.2003

http://eeas.europa.eu/enp/pdf/pdf/com03_104_en.pdf (22.09.14), Communication from the

Commission European Neighbourhood Policy, Strategy paper, COM (2004) 373 final

<http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:52004DC0373> (22.09.14):

Հարավային Կովկասի պետությունների եւ-ին անդամակցության, ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը համակողմանի ուսումնասիրելու համար սկզբնաղբյուրային նշանակություն ունեն եվրոպայի խորհրդի կոմվենցիաները, այդ թվում Մարդու իրավունքների եվրոպական կոմվենցիան (ՄԻԵԿ), Սոցիալական իրավունքների եվրոպական խարտիան, Տարածքային ինքնակառավարման եվրոպական խարտիան⁶: Ուսումնասիրության շրջանակներում օգտագործվել են եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) կողմից ընդունված մի շարք բանաձևեր, կարծիքներ, հանձնարարականներ⁷, որոնք լույս են սփռում եւ-ի առջև հարավկովկասյան պետությունների ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի, ինչպես նաև դրանց վերաբերյալ եւ-ի գնահատականների վրա: Ուսումնասիրության շրջանակներում մեր կողմից օգտագործվել են Հայաստանի, Կրաստանի և Ադրբեջանի վերաբերյալ ԵԽԽՎ-ի Քաղաքական և իրավական հանձնաժողովների, ինչպես նաև Սոնիտորինգի հանձնաժողովի կողմից ներկայացված մի շարք զեկույցներ⁸, Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոմվենցիայի խորհրդատվական կոմիտեի կողմից ընդունված կարծիքները⁹, Ռասիզմի և անհանդուրժողականության ընդդեմ եվրոպական հանձնաժողովի փաստաթղթերը¹⁰:

⁶Մարդու իրավունքների եվրոպական կոմվենցիա, Զոնմ, 1950 թ. նոյեմբերի 4, Երևան, 2005, եվրոպական սոցիալական խարտիա (վերանայված), Ստրասբուրգ, 1996 թ. մայիսի 3, Երևան, 2007, Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, Ստրասբուրգ, 15.10.1985 <http://www.coe.am/docs/signedandratified/122.pdf> (25.10.14):

⁷Կարծիք թիվ 221 (2000) Հայաստանի դիմումը եվրոպայի խորհրդին անդամակցության համար http://www.coe.am/docs/pace/opinion_221.pdf (26.08.14), Opinion No. 222 (2000) Azerbaijan's application for membership of the Council of Europe <http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta00/EOP1222.htm> (26.08.14), Resolution 1304 (2002) Honouring of obligations and commitments by Armenia <http://assembly.coe.int/main.asp?link=/Documents/AdoptedText/ta02/ERES1304.HTM> (19.10.14), Recommendation 1247 (1994) on the enlargement of the Council of Europe <http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta94/EREC1247.htm> (26.08.14):

⁸Honouring of obligations and commitments by Azerbaijan, Doc. 9545 revised, 18 September 2002

<http://assembly.coe.int/ASP/Doc/XrefViewHTML.asp?FileID=9836&Language=EN> (19.09.14), Honouring of obligations and commitments by Georgia, Doc. 9191, 13 September 2001 <http://assembly.coe.int/ASP/Doc/XrefViewHTML.asp?FileID=9465&Language=EN> (19.09.14):

⁹Հայաստանի վերաբերյալ կարծիք, Ստրասբուրգ, 16 մայիս 2002թ., Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոմվենցիայի խորհրդատվական կոմիտե, ACFC/OP/I (2002)5

http://www.coe.int/t/dghl/monitoring/minorities/3_FCNMdocs/PDF_1st_OP_Armenia_hy.pdf (07.10.14), Opinion on Azerbaijan, (Adopted on 22 May 2003), Strasbourg, 26 January 2004, Advisory committee on the framework convention for the protection of national minorities, ACFC/INF/OP/I(2004)001 http://www.coe.int/t/dghl/monitoring/minorities/3_FCNMdocs/PDF_1st_OP_Azerbaijan_en.pdf (19.10.14):

¹⁰ECRI, Report on Armenia, Adopted on 13 December 2002, Strasbourg, 8 July 2003, CRI (2003) 36

http://hudoc.ecri.coe.int/XML/Ecri/ENGLISH/Cycle_02/02_CbC_eng/ARM-CbC-II-2003-036-ENG.pdf (19.10.14), ECRI, Report on Georgia, Adopted on 22 June 2001, Strasbourg, 23 April

Եվրոպական կառույցների և Հարավային Կովկասի հանրապետությունների հարաբերությունները լուսաբանող արժեքավոր նյութեր են պարունակում նաև «Հայաստանի Հանրապետություն»¹¹, «Ազգ»¹², «Սվորդոմայա Գրուզիա»¹³ օրաթերթերը:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը

Վերջին տարիներին Եվրոպական կառույցների և Հարավային Կովկասի հանրապետությունների փոխհարաբերությունների տարբեր հիմնախնդիրների ուսումնասիրությունը ձեռք է բերել գիտական և գործնական կարևորություն: Եվրոպական կառույցներին Հարավային Կովկասի պետությունների ինտեգրման գործընթացի վերաբերյալ հրատարակվել են մի շարք մենագրություններ, գիտական հոդվածներ:

Թեմայի ուսումնասիրության շրջանակներում արժեքավոր է ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի կողմից հրատարակված «Եվրոպական միության արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում» միջմասնագիտական ուսումնասիրությունը: Այս ուշագրավ աշխատության շրջանակներում շեշտադրվել և համակողմանի վերլուծության են ենթարկվել հարավկովկասյան հանրապետությունների հետ ԵՄ-ի համագործակցության ձևաչափերը, ԵՄ-ի տարածաշրջանային շահերը՝ այլ պետությունների և կառույցների առաջնահերթությունների համատեքստում: Քննության է ենթարկվել նաև հակամարտությունների Եվրոպականացման հիմնախնդիրը¹⁴:

Հայաստանի և Եվրոպական կառույցների հարաբերությունների տարբեր հիմնահարցերի ուսումնասիրության շրջանակներում արժեքավոր է «Հայաստանը Եվրոպայի ճանապարհին» ժողովածուն, որն ունի նաև «Ինքնություն 2» անվանումը: Աշխատության մեջ տեղ են գտել ՀՀ արտաքին քաղաքականության և Եվրոպական ինտեգրման տարբեր հիմնահարցերին, այդ թվում նաև ազգային ինքնության վրա Եվրաինտեգրման ազդեցության հնարավոր հետևանքներին նվիրված Ա.Ոսկանյանի, Մ.Դաբաղի, Ռ.Շուգարյանի, Ա.Խաչատուրյանի, Մ.Էմերսոնի ուշագրավ հոդվածները¹⁵:

2002, CRI (2002)2

http://hudoc.ecri.coe.int/XML/Ecri/ENGLISH/Cycle_02/02_CbC_eng/02-cbc-georgia-eng.pdf

(07.10.14):

¹¹ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ 1996՝ թիվ 16, 64, 77, 78, 105, 147, 1997 թիվ 61, 80, 86, 1999 թիվ 180, 227, 2000 թիվ 11, 84, 92, 97, 2001 թիվ 31, 37, 2011 թիվ 183:

¹² «Ազգ» օրաթերթ՝ 1992 թիվ 10, 2010 թիվ 207:

¹³ «Свободная Грузия», 1999 № 20, 39, 49, 74, 84, 124, 139:

¹⁴ Եվրոպական միության արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում (Միջմասնագիտական հետազոտություն), Երևան, 2010:

¹⁵ Ոսկանյան Ա., Եվրոպական ինտեգրումը և Հայկական հարցը, Դաբաղ Մ., Հայկական հիշողությունը Եվրոպայի հիշողական քաղաքականության համատեքստում, Շուգարյան Ռ., Մերձավոր արտասահմանից մինչև նոր հարևանություն... Հարավային Կովկասը Եվրոպայի ճանապարհին. որոշ նկատառումներ Աևժովյան տարածաշրջանի ենթատեքստում, Խաչատուրյան Ա., Էմերսոն Մ., Եվրոպականացումը և

Թեմայի ուսումնասիրության շրջանակներում արժեքավոր է Գ. Քեռյանի և Դ. Սիմոնյանի «Հայաստան-Եվրոպական Միություն. հարաբերությունների ընթացքը և զարգացման հեռանկարները» մենագրությունը, որտեղ լուսաբանվում են ԵՄ-ի հետ Հայաստանի հարաբերությունների սկզբնավորումը, ընթացքը: Այդ հարաբերությունների էվոլյուցիան, արդյունքները և հեռանկարները ներկայացվում են տերությունների տարածաշրջանային շահերի համատեքստում: Ուսումնասիրության շրջանակներում առաջ են քաշվել մի շարք կոնկրետ առաջարկներ՝ ԵՄ-ի նորմերի և սկզբունքների հետ ԴՀ բոլոր ենթահամակարգերի համապատասխանեցման նպատակով¹⁶:

Եվրոպական Հարևանության Քաղաքականության (ԵՀՔ) տարբեր հարցերի լուսաբանման են նվիրված մի շարք ուսումնասիրողների գիտական հոդվածները: Ուշագրավ են Ս.Սինասյանի, Ա.Հարությունյանի, Գ. Հայրապետյանի հոդվածները¹⁷: Ս. Սինասյանի կողմից քննության են ենթարկվել ինչպես ԵՄ-ի և ԴՀ-ի փոխհարաբերությունների զարգացման դինամիկան, այնպես էլ ԵՀՔ-ի շրջանակներում համագործակցության հեռանկարները: Ա.Հարությունյանի կողմից համակողմանի վերլուծության է ենթարկվել ԵՄ-Հայաստան քաղաքական երկխոսության հիմնախնդիրը: Դեղինակը նախ ներկայացրել է ԵՄ-ի և այլ երկրների միջև քաղաքական երկխոսության մի քանի դրվագներ, այնուհետև անդրադարձ է կատարել ԴՀ-ի և ԵՄ-ի միջև քաղաքական երկխոսության սկզբնավորմանը, զարգացմանը և արդյունքներին: Գ.Հայրապետյանի գիտական հոդվածը նվիրված է Հայաստանի տնտեսության վրա ԵՀՔ-ի ազդեցության վերլուծությանը: Դեղինակի կողմից շեշտադրվել են մի շարք կարևորագույն հարցադրումներ՝ կարող է արդյո՞ք ԵՀՔ-ն ԴՀ տնտեսության համար կրկնել ԵՄ-ի նոր անդամ պետությունների տնտեսական հաջողությունները, նպաստել ԴՀ տնտեսության նոդեռնիզացմանը, օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ներհոսքին, ԵՄ-ի շուկա մուտք գործելու հնարավորություններին:

Վրաստանի, Ադրբեջանի և Եվրոպական կառույցների հարաբերություններին անդրադարձել են ինչպես վրացի և ադրբեջանցի, այնպես էլ այլազգի մի շարք հեղինակներ: Պետք է նշել, որ ադրբեջանական հեղինակները անտեսելով գիտական օբյեկտիվության սկզբունքները, Հարավային Կովկասի համրապետությունների փոխհարաբերությունների առանձին հիմնախնդիրներ դիտարկում են իշխանությունների պաշտոնական դիրքորոշումների և պետական քարոզչության

հակամարտությունների կարգավորումը Հարավային Կովկասում, Հայաստանը Եվրոպայի ճանապարհին, «Ինքնություն 2», խմբ. Ա.Ոսկանյան, Երևան, 2005:

¹⁶Քեռյան Գ., Սիմոնյան Դ., Հայաստան-Եվրոպական միություն հարաբերությունների ընթացքը և զարգացման հեռանկարները, Երևան, 2005:

¹⁷Минасян С., Армения и Программа ЕС, Политика Европейского Соседства, Центральная Азия и Кавказ, № 6 (42), 2005, Հարությունյան Ա., Եվրամիություն-Հայաստան համագործակցությունը Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում, Բանբեր Երևանի համալսարանի, № 2 (128) 2009, Հայրապետյան Գ., Եվրոպական հարևանության քաղաքականության ազդեցությունը ԴՀ տնտեսության զարգացման վրա, Բանբեր Երևանի համալսարանի, № 2 (128), 2009:

համատեքստում, ինչի հետևանքով այդ ուսումնասիրությունները մեծամասամբ զուրկ են որևէ գիտական կարևորությունից: Այսպես, օրինակ Ի.Յուսեյնովը քննելով ԵՄ-ի ընդլայնման և Հարավային Կովկասում վերջինիս քաղաքականության հիմնախնդիրները, Հայաստանը ներկայացնում է իբրև եվրոպական կառույցների կողմից առաջ քաշված տարածաշրջանային նախաձեռնությունների անհաջողությունների գլխավոր պատասխանատուն¹⁸: Գ.Պոլուխովի կողմից Ադրբեջանի արտաքին քաղաքականության, այդ թվում նաև եվրոպական ուղղության, հիմնախնդիրները ներկայացվում են որպես պետության առաջնորդ Հ.Ալիևի փայլուն դիվանագիտության արդյունք: ԵՄ-ի և Ադրբեջանի փոխհարաբերություններին նվիրված Ն.Ալիևի հոդվածում վերջիններս ներկայացվում են որպես ձեռքբերումների և հաջողությունների դրական իրողություններ¹⁹:

Վրաստանում եվրոպական ուղղությունը որպես արտաքին քաղաքականության գերակայություն հռչակումից հետո, ուսումնասիրություններ են կատարվում այդ ընտրությունը որպես պատմական օրինաչափություն հիմնավորելու ուղղությամբ: Այս հիմնախնդիրները արծարծվում են Գ.Նոդիայի, Դ.Դարչիաշվիլիի, Տ.Պատարայայի, Գ.Ջուրաբիշվիլիի աշխատություններում²⁰: Պետք է նշել, որ վրաց գիտական մտքի ներկայացուցիչների աշխատությունները զուրկ չեն քաղաքական ենթատեքստից, ինչի հետևանքով եվրոպական ուղղությունը ներկայացվում է իդեալականացված, որպես միակ արդարացված և ճիշտ ընտրություն նախկին խորհրդային հանրապետությունների համար:

Եվրոպական կառույցների և Հարավային Կովկասի հանրապետությունների փոխհարաբերությունները արծարծված են ռուս ուսումնասիրողների մի շարք աշխատություններում: Հատկապես արժեքավոր են Ի.Կոմիսինայի աշխատությունները, որտեղ ի մի են բերված եվրոպական կառույցների և Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի փոխհարաբերությունների կարևորագույն իրադարձությունները²¹:

¹⁸Гусейнова И., Расширение Европы и Южный Кавказ, Центральная Азия и Кавказ, № 4 (34) 2004:

¹⁹Полухов Г., Основные направления внешнеполитического курса Азербайджанской Республики на современном этапе, Центральная Азия и Кавказ, № 4 (5) 1999, Алиев Н., Состояние и перспективы сотрудничества Азербайджана с Европейским Союзом, Центральная Азия и Кавказ, № 3 (33), 2004:

²⁰Нодиа Г., Образ Запада в грузинском сознании, Международный опыт разрешения этнических конфликтов, М., 1997, Дарчиашвили Д., Патарая Т., Возращение в Европу? Некоторые аспекты ориентации системы безопасности Грузии, Центральная Азия и Кавказ, № 1 (13) 2001, Зурабашвили Г., Южный Кавказ на пути к Европе, Центральная Азия и Кавказ, № 4 (34) 2004.

²¹Комиссина И., Перспективы интеграции республик Закавказья в Европейский Союз, Центральная Азия и Кавказ, № 1(13) 2001, Комиссина И., Грузия и Западная Европа: Курс на интеграцию, Грузия: проблемы и перспективы развития, РИСИ, Т.1, Москва, 2001, Комиссина И., Армения и Западная Европа: экономическая помощь как стимул политического диалога, Армения: проблемы независимого развития, Москва, 1998:

Հարավկովկասյան հանրապետությունների եվրաինտեգրման գործընթացի առանձին հիմնահարցերին նվիրված հոդվածներ լույս են տեսել եվրոպական տարբեր գիտահետազոտական ինստիտուտների կողմից հրատարակվող ժողովածուներում, պարբերականներում, տարեգրքերում: Արժեքավոր նշանակություն ունեն եվրոպական միության անվտանգության ուսումնասիրությունների ինստիտուտի (The European Union Institute for Security Studies (EUISS) կողմից հրատարակվող «Chaillot Paper»-ի էջերում տեղ գտած Դ.Լինչի աշխատությունները, որտեղ համակողմանի քննվում են հարավկովկասյան տարածաշրջանում ԵՄ-ի ռազմավարության և քաղաքականության առանձնահատկությունները²²: ԵԱՀԿ-ի հետազոտությունների կենտրոնի (The Centre for OSCE Research (CORE) կողմից հրատարակվող «OSCE Yearbook»-ի շրջանակներում տեղ են գտել հարավկովկասյան երկրներում ԵԱՀԿ ներկայացուցչությունների գործունեությունը լուսաբանող Ե. Գոնկևիչի, Վ. Ջակոբիի, Պ. Մերինոյի և մի շարք այլ հեղինակների արժեքավոր հոդվածներ²³:

Արժեքավոր են նաև «Ֆրիդրիխ էբերտ» հիմնադրամի կողմից պատրաստված «Հարավային Կովկաս – Անկախության 20 տարիներ» (“South Caucasus – 20 Years of Independence”) ժողովածուի մեջ տեղ գտած Ն.Պոպեսկուի և Ու.Ֆալբախի հոդվածները՝ նվիրված Հարավային Կովկասում ԵՄ-ի քաղաքականությանը²⁴:

Եվրոպական կառույցների և ՀՀ-ի հարաբերությունների ուսումնասիրությանն են նվիրված Խ.Ադունյանի, Հ.Սիմոնյանի, Հ. Խեմչյանի ատենախոսությունները²⁵: Խ.Ադունյանի ծավալուն ուսումնասիրությունը նվիրված է եվրոպական և տարածաշրջանային կառույցներին ՀՀ

²²Lynch D., The EU: towards a strategy, The South Caucasus: a challenge for the EU, Chaillot Papers, № 65, December 2003 <http://www.iss.europa.eu/uploads/media/cp065e.pdf> (08.02.15), Why Georgia matters, Chaillot paper, № 86, February 2006, Institute for Security Studies European Union <http://www.iss.europa.eu/uploads/media/cp086.pdf> (08.02.15):

²³Gonkievich E., The OSCE’s Support for the Reform Process in Armenia, OSCE Yearbook, 2004, Jacoby V., The OSCE Mission to Georgia, OSCE Yearbook 2003, Merino P., The Office for Democratic Institutions and Human Rights, OSCE Yearbook 1998:

²⁴Popescu N., ENP and EaP: relevant for the South Caucasus?, Halbach U., The European Union in the South Caucasus: Story of a hesitant approximation, South Caucasus – 20 Years of Independence, Friedrich-Ebert-Stiftung <http://library.fes.de/pdf-files/bueros/georgien/08706.pdf> (08.02.15):

²⁵Ադունյան Խ., Հայաստանը և եվրոպական ու տարածաշրջանային ինտեգրումը (1992-2003 թթ.), «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2006, Սիմոնյան Հ. Եվրոպական կառույցներին Հայաստանի Հանրապետության անդամակցության արդյունքները և հեռանկարները, «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2007, Խեմչյան Հ., ՀՀ հարաբերությունները եվրոպական կառույցների հետ և համագործակցության հիմնական ծրագրերը, «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2012:

ինտեգրման գործընթացի վերլուծությանը: Հեղինակն անդրադարձել է ինչպես տարածաշրջանային՝ Անկախ պետությունների համագործակցությանը (ԱՊՀ), Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությանը (ՍՕՏՀ), այնպես էլ եվրոպական կառույցներին՝ Հայաստանի անդամակցության գործընթացին: Վերլուծության են ենթարկվել ԵՄ-ի, ինչպես նաև Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպության (ՆԱՏՕ) հետ Հայաստանի փոխհարաբերությունները: Հասկանալի է, որ թեմայի բավական ընդգրկում լինելու հանգամանքով պայմանավորված, որոշ հիմնախնդիրներ հեղինակի կողմից ներկայացվել են մակերեսորեն կամ ընդհանրապես չեն հիշատակվել: Մեծ ուշադրություն է հատկացվել հատկապես քաղաքական խնդիրներին, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման գործընթացին:

Հ.Սիմոնյանի ատենախոսության շրջանակներում քաղաքագիտական տեսանկյունից քննության են ենթարկվել ԵԱԿ-ին և ԵԽ-ին ՀՀ անդամակցության ներքաղաքական հետևանքները, ՀՀ քաղաքական համակարգի վերափոխումները:

Հ. Խենյանի ատենախոսությունը նվիրված է եվրոպական կառույցների և Հայաստանի համագործակցության հիմնական ծրագրերի վերլուծությանը: Սակայն որոշ հիմնախնդիրներ հեղինակի կողմից ներկայացվել են հպանցիկ, ինչը պայմանավորված է ուսումնասիրության ժամանակաշրջանի լայն ընդգրկմամբ՝ 1991-2011 թթ.: Պետք է նշել, որ հեղինակի կողմից կատարվել է հսկայական աշխատանք եվրոպական կառույցների՝ ԵԱԿ-ի, ԵԽ-ի, ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի հետ և ՀՀ համագործակցության հիմնական ուղղությունները վեր հանելու առումով:

ԵՄ-ի և ՀՀ-ի հարաբերություններին վերաբերող մի շարք հիմնախնդիրներ արծարծվում են Ե.Վարդազարյանի, Հ.Թորոսյանի, Ա.Խաչիկյանի ատենախոսությունների շրջանակներում²⁶: Ե.Վարդազարյանի ատենախոսության շրջանակներում վերլուծության են ենթարկվում Հարավային Կովկասում երեք ուժային կենտրոնների՝ ԱՄՆ-ի, ԵՄ-ի, ՌԴ-ի մրցակցության ու համագործակցության հիմնախնդիրները: Հ.Թորոսյանի ատենախոսությունը նվիրված է ՀՀ-ի և ԵՄ-ի հարաբերությունների վերլուծությանը 2009 թ. մեկնարկած «Արևելյան գործընկերության» շրջանակներում, սակայն հեղինակի կողմից որոշակի

²⁶Վարդազարյան Ե., ԱՄՆ, ԵՄ և ՌԴ ռազմավարությունը Հարավային Կովկասում ընթացող աշխարհաքաղաքական զարգացումների համտեքստում, «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2013, Թորոսյան Հ., «Հայաստանի և Եվրամիության միջև հարաբերությունների զարգացման միտումները «Արևելյան գործընկերության» ծրագրի շրջանակներում», «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2013, Խաչիկյան Ա., Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության հարաբերությունները 1992-2013 թթ., «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2014:

անդրադարձ է կատարվել նաև ԵՅԶ-ի որոշ հիմնահարցերի: Ա. Խաչիկյանի կողմից փորձ է արվել ներկայացնել ԵՄ-ի և ՀՀ-ի շուրջ երկու տասնամյակների փոխհարաբերությունների պատմությունը: Հեղինակի կողմից շատ իրողություններ ներկայացվել են հպանցիկ կամ ընդհանրապես չեն հիշատակվել:

Հանրագումարի բերելով թեմային վերաբերող գրականության վերլուծության արդյունքները, կարելի է փաստել, որ եվրոպական կառույցների և Հարավային Կովկասի պետությունների հարաբերությունների տարբեր հիմնահարցեր բավականաչափ լուսաբանված են: Սակայն այս ուսումնասիրությունների շրջանակներում եվրոպական կառույցների և Հարավային Կովկասի հանրապետությունների փոխհարաբերությունները վերլուծության են ենթարկվել քաղաքագիտական, միջազգային հարաբերությունների, տնտեսագիտական, իրավագիտական դիտանկյունից: Միևնույն ժամանակ եվրոպական կառույցներին Հարավային Կովկասի պետությունների ինտեգրման գործընթացը պատմագիտական առանձին հետազոտության առարկա չի դարձել: Նշված ուսումնասիրությունները ընդգրկում են բավական մեծ ժամանակահատված և հիմնախնդիրների լայն շրջանակ, ինչի արդյունքում դրանցից շատերը ներկայացվել են հպանցիկ: Շատ դեպքերում ուսումնասիրողները սահմանափակվել են եվրոպական կառույցների կողմից առաջ քաշված տարբեր ծրագրերի համառոտ ներկայացմամբ և վերլուծությամբ: Մասնավորապես նշված աշխատություններում ուսումնասիրության հատուկ առարկա չեն դարձել եվրոպական կառույցներին Հարավային Կովկասի երկրների ինտեգրման գործընթացի համատեքստում այս հանրապետություններում տեղ գտած սոցիալական, տնտեսական, մարդու իրավունքների, այդ թվում նաև ազգային փոքրամասնությունների պաշտպանության, մշակույթի, կրթության ոլորտում վերափոխումների արդյունքները: Վերոնշյալ հիմնախնդիրները պատմագիտական տեսանկյունից ուսումնասիրելու, համադրելու և համեմատական վերլուծության ենթարկելու փորձ է կատարվել ներկայացված առեմախոսության շրջանակներում:

Ատենախոսության կառուցվածքը և ըովանդակությունը

Ատենախոսությունը կազմված է առաջաբանից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության և աղբյուրների ցանկից, երկու հավելվածներից:

Առաջաբանում ներկայացված են թեմայի արդիականությունը, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, գիտական նորույթը, առաջադրված խնդիրներն ու նպատակները, աղբյուրների և գրականության վերլուծությունը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Հարավային Կովկասի պետությունները և եվրոպական կառույցները ետխորհրդային աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում (1991-2004 թթ.)», բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում, որը վերնագրված է «Հարավային Կովկասը եվրոպական կառույցների քաղաքականության համատեքստում», համառոտ ներկայացվում են եվրոպական կառույցների հիմնադրման

պատմությունը, հարավկովկասյան տարածաշրջանում եվրոպական պետությունների հետաքրքրություններն ու քաղաքականությունը, եվրոպական կառույցների տեսանկյունից Հարավային Կովկասի նշանակությունը:

Երկրորդ ենթագլխում՝ «Հարավկովկասյան պետությունների եվրասիական գործընթացը և եվրոպական արժեհամակարգը» ներկայացված են եվրոպական արժեքների՝ մասնավորապես մարդու իրավունքների պաշտպանության ոլորտին վերաբերող որոշ հարցեր, ինչպիսիք են մտքի, խղճի ազատությունը, սեռերի հավասարությունը, որոնք բացասական արձագանք ունեցան Հարավային Կովկասի հասարակություններում: Դրանք դիտարկվում են ազգային, պատմական, ավանդական աշխարհայացքի տեսանկյունից:

Ատենախոսության **երկրորդ գլուխը**, որը վերնագրված է **«Հարավկովկասյան պետությունների անդամակցությունը եվրոպական կառույցներին և համագործակցությունը դրանց շրջանակներում (1992-2004 թթ.)»**, բաժանված է երկու ենթագլուխների:

Առաջին ենթագլուխը՝ «Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության շրջանակներում (1992-2004 թթ.)» նվիրված է հարավկովկասյան պետություններում ընթացող ժողովրդավարացման, սոցիալ-տնտեսական խնդիրների հաղթահարման գործընթացներին ԵԱՀԽ/ԵԱՀԿ մասնակցության վերլուծությանը:

Երկրորդ ենթագլուխը՝ «Հարավային Կովկասի պետությունների անդամակցությունը եվրոպայի խորհրդին և համագործակցությունը կառույցի շրջանակներում (1991-2004 թթ.)» նվիրված է ԵՄ-ին հարավկովկասյան երկրների անդամակցության գործընթացի, ինչպես նաև ետանդամակցային ժամանակահատվածում այս հանրապետություններում կատարված վերափոխումների վերլուծությանը: Ներկայացվում է անդամակցության գործընթացն սկսած 1996 թ. «հատուկ հրավիրյալ պետության» կարգավիճակի շնորհումից մինչև լիիրավ անդամակցումը:

Երրորդ գլուխը՝ «Եվրոպական միության և հարավկովկասյան պետությունների հարաբերությունները 1991-2004 թթ.» ներկայացնում է Եվրոպական միության և հարավկովկասյան հանրապետությունների միջև հաստատված բազմակողմ հարաբերությունները:

Առաջին ենթագլուխը՝ «Եվրոպական միության և հարավկովկասյան պետությունների հարաբերությունները 1991-1999 թթ.» նվիրված է Եվրոպական միության և հարավկովկասյան հանրապետությունների միջև հարաբերությունների սկզբնավորմանը, ԵՄ-ի տարբեր ծրագրերի արդյունավետության վերլուծությանը:

Երկրորդ ենթագլուխը՝ «Հարավային Կովկասի պետությունների և ԵՄ-ի համագործակցության հիմնական ուղղությունները 2000-2004 թվականներին» դիտարկվում է 2000 թ. տարածաշրջանում ԵՄ-ի քաղաքականության ակտիվացումը. 2001 թ. ԵՄ հատուկ ներկայացուցչի նշանակումը, 2003 թ. Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ընդգրկումը Ե-Ք շրջանակներում: Վերլուծության են ենթարկվում Ե-Ք-ի շրջանակներում ընդունված Գործողությունների պլաններով սահմանված

առաջնությունները:

Ուսումնասիրությունը եզրափակում են հետազոտության արդյունքներն ամփոփող եզրակացությունները և օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը: Ատենախոսությանը կցված են նաև երկու հավելվածներ՝ օգտագործված հասպտվումների ցանկը և մեր կողմից եվրոպական կառույցների վերաբերյալ անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքները:

Եզրակացություններում կատարվել են հետևյալ եզրահանգումները.

- Եվրոպական կառույցները՝ մասնավորապես ԵՄ-ը նախընտրում էր հարաբերությունները խորացնել այն պետությունների հետ, որոնք ունեին իրենց տարածաշրջանում համագործակցության և ինտեգրման փորձառություն: Այդ նպատակով եվրոպական կառույցների կողմից առաջ քաշվեցին մի շարք տարածաշրջանային համագործակցության նախաձեռնություններ՝ տնտեսության, միջխորհրդարանական համագործակցության, մշակույթի, կրթության, զբոսաշրջության, ժողովրդական դիվանագիտության ոլորտներում: Այդ ծրագրերից շատերը չունեցան սպասված արդյունքները, քանի որ չհապահովեցին հավասար մասնակցություն և հնարավորություններ Հարավային Կովկասի երեք պետությունների համար: Միևնույն ժամանակ դրանց շրջանակներում առաջ քաշվող հանդուրժողականության, վստահության, փոխադարձ հարգանքի կարգախոսները գործնականում անտեսվում էին ադրբեջանական իշխանությունների կողմից փոխարինվում էին ռազմատենչ հայտարարություններով և գործողություններով:

- Եվրոպական կառույցների կողմից «ընդհանուր արժեքներ» հասկացության համատեքստում շատ հաճախ առաջ էին քաշվում «եվրոպական արժեքները» կամ «եվրոպական չափանիշները», որոնք ներկայացվում էին իբրև ունիվերսալ և բացարձակ: Այդ չափանիշներն առնչվելով քաղաքականության, տնտեսության, հասարակական կյանքի տարբեր ոլորտներին, որոշ հարցերում հակադրվում էին ավանդական, աշխարհայացքային պատկերացումներին: Այս չափանիշների ներդրման հարցում շտապողականությունը, ինչպես նաև դրանց վերաբերյալ հասարակության ոչ բավարար տեղեկացվածությունը, առաջ էին բերում հակասական տրամադրություններ:

- ԵԱԿ-ն նկատելի դերակատարություն ունեցավ տարբեր խնդիրների վերաբերյալ հասարակական տեղեկացվածության, իրազեկման բարձրացման ոլորտում: ԵԱԿ-ի ակտիվ մասնակցությամբ հասարակական քննարկման առարկա դարձան բնապահպանական, կոռուպցիայի դեմ պայքարի, մարդու իրավունքների պաշտպանության մի շարք խնդիրներ: Դա տեղի ունեցավ մասնավորապես հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների գործունեության խրախուսման ճանապարհով: ԵԱԿ-ն մեծ դեր կատարեց նաև ԵՄ-ի և ԵԽ-ի առջև այս երկրների ստանձնած պարտավորությունների կատարման գործում՝ տրամադրելով տեխնիկական և փորձագիտական օժանդակություն:

- Հարավային Կովկասի պետությունները անդամակցեցին

Եվրոպայի խորհրդին՝ ստանձնելով մի շարք պարտավորություններ: Այդ պարտավորություններից շատերը, որոնք վերաբերում էին կոնվենցիաների վավերացմանն ու օրենսդրական վերափոխումներին, մի քանի տարիների ընթացքում մասամբ իրականացվեցին: Օրենսդրական փոփոխություններ տեղ գտան ընտրական, սոցիալական, մարդու իրավունքների պաշտպանության և մի շարք այլ ոլորտներում: Գործնական քայլեր կատարվեցին նաև վերջիններս կյանքի կոչելու համար համապատասխան կառույցների հիմնադրման և դրանց գործունեության անկախությունը ապահովելու ուղղությամբ: Սակայն հաճախ ԵՄ-ի կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան քայլեր ձեռնարկելու նպատակով, ընդունվեցին շուտափույթ և մակերեսային որոշումներ: Միևնույն ժամանակ որոշ խնդիրներ այդպես էլ մնացին չլուծված:

- ԵՄ-ի առջև ստանձնած պարտավորությունները երբեմն չէին համապատասխանում այս հանրապետությունների նյութական, մարդկային ռեսուրսներին, ինչ հետևանքով առաջ էր գալիս աններդաշնակություն հայտարարված սկզբունքների և իրականության միջև: Սակայն միշտ չէ, որ այդ խնդիրները կապված էին նյութական ռեսուրսների անբավարարության հետ. շատ դեպքերում դա այս հանրապետությունների իշխանությունների քաղաքական կամքի բացակայության հետևանքն էր: Սակայն որոշ դեպքերում վերահսկողության գործառնություններ ունեցող ԵՄ-ի համապատասխան օղակները սահմանափակվում էին այս կամ այն խնդրի վերաբերյալ մտահագության կամ ակոսանքի արտահայտումով:

- ԵՄ-ի կողմից 1999 թ. կայացվեց քաղաքական որոշում այդ կառույցին Վրաստանի անդամակցության վերաբերյալ: Այդ որոշման կայացման համար վճռորոշ նշանակություն ունեցավ վրացական իշխանությունների կողմից եվրոպական ուղղության հռչակումը որպես արտաքին քաղաքականության գերակայություն: Ի սկզբանե, ԵՄԽՎ-ի կողմից որդեգրվեց հակասական մոտեցում՝ Հայաստանի անդամակցությունը Ադրբեյջանի հետ համատեղ դիտարկելու վերաբերյալ: Դա ունեցավ իր բացասական հետևանքները. նախ անհիմն ձգձգվեց Հայաստանի անդամակցության գործընթացը, իսկ հետագայում՝ Հայաստանում և Ադրբեյջանում տեղի ունեցող գործընթացները սկսեցին դիտարկվել միևնույն հարթության վրա, որը արտահայտվում էր ԵՄԽՎ բանաձևերում ընդունված հակասական ձևակերպումներում և եզրակացություններում:

- Հարավային Կովկասի հանրապետությունների անկախությանը հաջորդած առաջին տարիներին ԵՄ-ի տրամադրած մարդասիրական օժանդակությունն ունեցավ կենսական նշանակություն: Հետագայում տեխնիկական և ֆինանսական օժանդակությունը՝ մասնավորապես ՏԱՄԻՍ-ի ծրագրերը, հիմքեր չստեղծեցին կայուն զարգացման համար: ՏԱՄԻՍ-ի ծրագրերը շատ դեպքերում նպատակային և արդյունավետ չէին, քանի որ բավական բարձր էին փորձագետների վճարները, միևնույն ժամանակ հաշվի չէին առնվում տեղական առանձնահատկությունները և այլն:

- Հարավային Կովկասի հանրապետությունները 2004 թ. մայիսին ընդգրկվեցին ԵՄ-ի Եվրոպական Հարևանության Քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում: ԵՄ-ի և Հարավային Կովկասի

պետությունների հարաբերությունները թևակոխեցին որակական և բովանդակային առունով մի նոր փուլ, որը նախատեսում էր ավելի խորը և տարբերակված համագործակցություն՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական և մի շարք այլ ոլորտներում:

- Հարավային Կովկասի պետությունների անդամակցությունը ԵԱԶԿ-ին և ԵԽ-ին ունեցավ կարևորագույն նշանակություն այդ պետությունների միջազգային ճանաչման տեսանկյունից: Անդամակցությունն այդ կառույցներին հաստատում էր Հարավային Կովկասի հանրապետությունների որդեգրած դիրքորոշումը՝ կառուցել եվրոպական չափանիշներին համապատասխան ժողովրդավարական և սոցիալական պետություն: ԵՄ-ի հետ հարաբերությունների խորացումը և տարբեր ձևաչափերի հաստատումը ևս նպաստեց եվրոպականացման գործընթացին: Միևնույն ժամանակ եվրոպական կառույցներին ինտեգրման գործընթացում տեղ գտան որոշ խնդիրներ, որոնք ունեին զուտ դեկլարատիվ բնույթ: Հետևաբար այս խնդիրներն ունեին վերանայման կարիք, ինչը պետք է բխի ոչ թե եվրոպական չափանիշների պարտադիր ներմուծման անհրաժեշտությունից, այլ պետության կայացման սեփական տեսլականից:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրատարակած աշխատությունները

1. Ձոհրաբյան Է.Լ., Տետյան Ա.Ա., Անդրկովկասյան երկրները Իրանի Իսլամական Հանրապետության տարածաշրջանային քաղաքականության համատեքստում, Գավառի Պետական Համալսարանի տասներորդ գիտաժողովի նյութերը, Գիտական հոդվածների ժողովածու. հումանիտար գիտություններ, Երևան, Օրենք և իրականություն, 2008, էջ 117-127:
2. Տետյան Ա.Ա., Եվրոպական Հարևանության Քաղաքականությունը և հարավկովկասյան հանրապետությունները, Կանթեղ. գիտական հոդվածների ժողովածու, Գիրք 4(37), Երևան, Ասողիկ, 2008, էջ 142-150:
3. Տետյան Ա.Ա., Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱԶԿ) երևանյան գրասենյակի գործունեությունը տնտեսական և բնապահպանական ոլորտում (2000-2004 թթ.), Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), Բ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, էջ 164-173:
4. Տետյան Ա.Ա., Հայաստանի Հանրապետության ինտեգրումը եվրոպական կառույցներին և եվրոպական արժեքները, Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), Գ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 195-201:
5. Ձոհրաբյան Է.Լ., Տետյան Ա.Ա., Սոցիալական ոլորտը եվրոպական կառույցների հետ Հայաստանի և հարավկովկասյան հանրապետությունների հարաբերություններում, Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 97-104:
6. Տետյան Ա.Ա., Եվրոպական կառույցները և Հարավային Կովկասում տարածաշրջանային համագործակցության նախաձեռնությունները (1998-

2005 թթ.), Ալունք գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1 (11), Իջևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 52-59:

ТЕТЕЯН АРШАЛУЙС АВЕТИСОВНА

**ПРОЦЕСС ЕВРОИНТЕГРАЦИИ ЮЖНОКАВКАЗСКИХ ГОСУДАРСТВ
(1991-2004)**

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 “Всемирная история”.

Защита состоится 1-го июля, 2015 г., в 15.00 часов на заседании специализированного совета 006, действующего при Институте востоковедения НАН РА.

По адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению евроинтеграции южнокавказских государств в 1991-2004 гг. В последние годы были изданы отдельные труды, посвященные анализу различных аспектов взаимоотношений южнокавказских государств с европейскими организациями. Важно отметить, что процесс евроинтеграции южнокавказских стран в основном рассматривался в контексте изучения политики и стратегии европейских организаций на Южном Кавказе. В центре внимания авторов также оказались проблемы внешнеполитических приоритетов Армении, Грузии, Азербайджана, в которых особое место занимали отношения с европейскими организациями. В то же время в научной литературе до сих пор нет целостного, всеобъемлющего исследования, посвященного комплексному и сравнительному анализу евроинтеграции южнокавказских стран.

Диссертационное исследование состоит из введения, трех глав, заключения, списка источников, литературы и двух приложений.

Во введении обоснована актуальность и научная новизна работы, определяются объект и предмет исследования, хронологические рамки, формулируются цели и задачи, дается общая характеристика источниковой базы, анализируется степень изученности темы.

Первая глава “Государства Южного Кавказа и европейские организации в контексте геополитических процессов постсоветского периода (1991-2004)” состоит из двух параграфов.

В первом параграфе представлена краткая история создания европейских организаций, проанализирована политика этих организаций в южнокавказском регионе.

Во втором параграфе рассмотрены европейские ценности, а также их резонанс в южнокавказских обществах.

Вторая глава «Членство стран Южного Кавказа в европейских организациях и сотрудничество в рамках этих организаций (1992-2004)», разделена на две части. В первом параграфе анализируется роль СБСЕ/ОБСЕ в процессах демократизации и преодоления социально-экономических трудностей в странах Южного Кавказа. Во втором параграфе подробно рассматривается процесс вступления южнокавказских государств в Совет Европы. Анализируются обязательства, которые взяли на себя южнокавказские страны, а также процесс их выполнения.

Третья глава «Отношения между Европейским Союзом и южнокавказскими государствами в 1991-2004 гг.» посвящена вопросам многосторонних отношений стран Южного Кавказа с ЕС. Она состоит из двух параграфов, первый из которых посвящен анализу различных проектов, реализованных ЕС. Проблемы активизации политики ЕС в регионе в 2000 году, назначения Специального представителя ЕС и вовлечения Армении, Грузии и Азербайджана в проектах Европейской политики соседства (ЕПС) обсуждаются во втором параграфе.

Основные выводы исследования суммированы в заключении. В конце диссертации помещен список использованных источников и литературы. Работа имеет два приложения: список сокращений, использованных автором при работе над темой и результаты социологического опроса относительно европейских учреждений, проведенного среди студентов нескольких университетов в Ереване по инициативе автора.

TETEVAN A. ARSHALUYS

THE EUROPEAN INTEGRATION PROCESS OF THE SOUTH CAUCASIAN COUNTRIES (1991-2004)

**The defense of the dissertation will take place at 15.00, on July 1 of 2015, at the meeting of the Specialized Council 006 “World History” at the Institute of Oriental Studies of the NAS RA.
Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4.**

The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of “World History” 07.00.02.

SUMMARY

The investigation of various core issues on the European integration process of the South Caucasian countries has grown into a problem of both scientific and practical importance as evidenced by several researches, having been conducted in the fields of political science, economics and jurisprudence in recent years. At the same time, a number of important and key issues, that concern the theme, are still subject to multilateral investigation when the matter is being considered within the frames of historiography.

It should be noted that the European integration process of the South Caucasian states has been basically discussed in the context of researches both on the policy of the European institutes in the South Caucasus region and on the foreign policy priorities of Armenia, Georgia and Azerbaijan. The problems of establishing and maintaining democratic institutions as well as the transformations and the results they caused in the spheres of economy, social life, human rights (including the protection of national minorities), culture and education when the South Caucasus countries kept in touch with the European organizations have been studied insufficiently. Hence, the matter of bringing them together through comparisons and many-sided research is of urgent importance.

The dissertation is comprised of an introduction, three chapters, inferences, a reference list and two appendixes.

The modernity of the theme, the subject of the study, the scientific novelty, the research questions and purposes, as well as the literature review have been presented in the introduction.

The first chapter of the dissertation is entitled “The countries of the South Caucasus and the European institutions within the frames of the geopolitical processes in the post-soviet period (1991-2004)”. It is composed of two subsections.

The outline of establishing the European Institutions as well as the interests and policy of European Powers in the South Caucasus region are

taken up in the first subchapter.

The European values and their reverberations among the South Caucasus societies have been discussed in the second subchapter.

The second chapter of the work that carries the title “The membership of the South Caucasus countries to the European Institutions and the cooperation within the scope of these institutions (1992-2004)” is including two subsections. The first one deals with the analysis of the CSCE/OSCE’s participation in the ongoing processes of democratization and overcoming the socio-economic difficulties in the South Caucasus countries.

The analysis of developments for the South Caucasus nations to gain membership of the Council of Europe as well as of transformations that took place in the said countries after they became the member-states of the CE is considered in the second subchapter.

The third chapter, “The relationship between the European Union and the South Caucasus countries in 1991-2004”, weighs the EU-South Caucasus countries multilateral relations. This chapter, too, is comprised of two subsections, the first of which is dedicated both to the initiatives for relationship between the European Union and the South Caucasus countries and to the assessment of various projects implemented by the EU. The problems of having the EU’s policy activated in the region in 2000, the appointment of the Special Representative of the EU and the involvement of Armenia, Georgia and Azerbaijan in the European Neighborhood Policy are considered in the second subchapter.

The main findings of the study are summed up in the conclusion. A reference list is provided at the end of the thesis. The work has two appendixes-the list of the abbreviations used in the thesis and the results of the sociological survey on the European institutions, conducted among the students of several universities in Yerevan by our initiative.